

Եվրոպայի խորհուրդը 2007թ. հայտարարել է կանանց նկատմամբ բռնությունների, այդ թվում ներընտանեկան բռնության դեմ պայքարի տարի: Այդ կապակցությամբ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն 2006թ. հունիսի 21-ին ընդունել է «Կանանց նկատմամբ բռնությունների, այդ թվում ներընտանեկան բռնության դեմ պայքարի արշավի մասին» (EGTFV) փաստաթուղթը: Արշավին արդեն միացել են մի շարք ԵԽ անդամ երկրներ: Հայաստանի Հանրապետությունը ևս միանում է այդ արշավին՝

«Վերջ բռնության կանանց նկատմամբ» կարգախոսով:

Ի՞նչ է բռնությունը...

«կանանց նկատմամբ բռնություն»

տերմինը նշանակում է սեռական հատկանիշով կատարվող բռնության ամեն մի գործողություն, որը ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս կամ տառապանք է պատճառում կամ կարող է պատճառել կանանց, ինչպես նաև այդպիսի գործողությունների սպառնալիքներ, հարկադրանք կամ կամայական գրկում ազատությունից՝ լինի դա հասարակական թե անձնական կյանքում: Կանանց նկատմամբ բռնությունը, այդ թվում՝ ընտանեկան բռնությունը մարդու իրավունքների սեռային հատկանիշով պայմանավորված լրջագույն

խախտումներից է: Այն կանանց գրկում է հիմնարար ազատություններից օգտվելու հնարավորությունից: Ընտանիքում կանանց նկատմամբ կիրառվող ֆիզիկական, սեռական և/կամ հոգեբանական բռնությունը կանանց և տղամարդկանց միջև հավասարություն ապահովելու լուրջ խոչընդոտ է հանդիսանում:

Չնայած քաղաքականության և պրակտիկայի առումներով դրական և լուրջ ձեռքբերումներին՝ կանանց նկատմամբ բռնության զանազան դրսևորումները շարունակում են տարածված երևույթ լինել բոլոր հասարակություններում: Կանայք և աղջիկները այս կամ այն չափով ենթարկվում են բռնության անկախ նրանց կրոնական համոզմունքների, էթնիկական կամ դասակարգային պատկանելիության, սոցիալական կարգավիճակի, եկամտի մակարդակի, հասարակության մեջ գրաված դիրքի, տարիքի, կրթական կամ մշակութային մակարդակի:

Ի՞նչ է ստում վիճակագրությունը...

Կանանց նկատմամբ բռնության տարածվածության վերաբերյալ տվյալները վկայում են, որ կանանց 25-ից 20 տոկոսն իրենց կյանքի ընթացքում գոնե մեկ անգամ ենթարկվել են ֆիզիկական բռնության, իսկ նրանցից ավելի, քան տաս տոկոսը ենթարկվել են ուժի

գործադրությամբ սեռական բռնության: Միջնորդավորված տվյալների վերլուծության համաձայն 16 տարեկանից բարձր տարիքի կանանց 12-ից 15 տոկոսն ենթարկվել են ընտանեկան բռնության: Շատերը շարունակում են տառապել ֆիզիկական և սեռական բռնությունից անգամ ամուսիններից բաժանվելուց հետո:

Բռնության գործողությունները կամ դրա կատարման սպառնալիքները, անկախ այն բանից, թե որտեղ են կատարվում՝ ընտանիքում թե՛ հասարակությունում, անհատի թե՛ պետության կողմից, կնոջ կյանքին բերում են վախի զգացում, անվտանգության բացակայություն և խոչընդոտ են հանդիսանում հավասարության, զարգացման և խաղաղության հասնելու նրանց նպատակների իրականացման համար: Մա էլ իր հերթին խոչընդոտում է կնոջ լիարժեք կյանքին ընտանիքում և գործունեության ակտիվությանը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, ինչպես նաև սահմանափակում է տարբեր ռեսուրսների նրանց տնօրինմանը:

Այսպիսով **բռնությունը կնոջ նկատմամբ հանդիսանում է սոցիալական այն կարևոր լծակներից մեկը, որի միջոցով կնոջը ստիպում են ենթակայական դիրք գրավել փնտեսական, քաղաքական և հասարակական կյանքում:**

Ի՞նչ է կորցնում կինը... կյանք, առողջություն, շատ հաճախ՝ ընտանիք, կրթություն, աշխատանք, պրոֆեսիոնալիզմ, հարգանք հասարակության մեջ...

Ի՞նչ է կորցնում ընտանիքը առողջ սերունդ, երեխաների նորմալ դաստիարակություն, տնտեսական կարգավիճակ, ստեղծագործ ֆունկցիան... Ի՞նչ է կորցնում հասարակությունը անհատ, լիարժեք աշխատող, ընտանիքը՝ որպես հասարակության բջիջ, զարգացման պոտենցիալ...

Ի՞նչ է կորցնում պեպոնությունը... առաջին հերթին իր իրավական դեմքը (իմիջը) և ամենակարևորը՝ սոցիալական և քաղաքական անվտանգությունը...

Քարոզարշավի նպատակները

- ճեղքել լռությունը և բարձրացնել իրազեկվածությունն այն մասին, որ կանանց նկատմամբ բռնությունը մարդու իրավունքների ոտնահարում է, և որ յուրաքանչյուր քաղաքացի պետք է պայքարի այդ բռնության դեմ,
- քաղաքական կամք ցուցաբերել՝ համապատասխան միջոցներ տրամադրելով կանանց նկատմամբ բռնությունը վերացնելու գոր-

ծում հստակ արդյունքների արձանագրելու համար,

- խթանել կանանց նկատմամբ բռնությունը վերացնելուն և կանխելուն ուղղված արդյունավետ միջոցների կիրառումն անհրաժեշտ օրենքների և գործողությունների ծրագրեր ընդունելու և առաջընթացը պարբերաբար գնահատելու միջոցով:

Քարոզարշավի ուղերձները

- ընտանեկան բռնության դեմ պայքարը պահանջում է հավաքական ջանքեր,
- ընտանեկան բռնությունը մարդու իրավունքների ոտնահարում է,
- ընտանեկան բռնությունը լուրջ վնաս է հասցնում թե՛ կանանց և թե՛ ամբողջ հասարակությանը, այդ թվում՝ ապագա սերունդներին,
- ընտանեկան բռնության դեմ պայքարը պահանջում է տղամարդկանց ակտիվ մասնակցություն կանանց նկատմամբ բռնությունը վերացնելու գործում:

**Մի՛ լռեք,
մի՛ հանդուրժեք,**

**արձագանքե՛ք և
միացե՛ք**



Գիզայնե՝ Վիլամ Կարապետյան

**«Վերջ բռնությանը
կանանց նկատմամբ»
քարոզարշավին**



հեռախոսներ 56-53-21 56-37-91
arminet@mss.am
internationaldivision@yahoo.com